

րէն ,այսինքն՝ Տարսնի, Սոոյ, Ատա-  
նայի եւ Ghernac(?)—ի ժողովներէն»:

«Պէտք է նկատել, թէ եւ հայերը տա-  
րակարծիք են ծիսակատարութեան մա-  
սին, սակայն, բոլորն ալ համաձայն են  
տարուան մէջ պահուելիք ծովերու մասին  
եւ ինչ կերպով պահուելու մասին: Որով՝  
Փրանկ անունը, որ կը տրուի լատինա-  
ծէաներուն, այսինքն՝ անոնց, որոնք  
սուրբ պաշտամունք կը կատարեն լատին  
կամ ուրիշ արեւմտեան լեզուով եւ իրենց  
պահպերուն ու ծովերուն համար կը հե-  
տեին Հռովմայ հաստատած կարգին, կամ  
ուրիշ արեւմտեան թաղաւորութեան մը  
կարգին: Յայտնի է, որ հայերը չեն գի-  
տեր, թէ ի՞նչ ըսել կ'ուզեն, երբ մէկը  
միւսը Փրանկ կը կոչեն, ինչու որ անոնցմէ  
ոչ մէկը լատին ծէսը ընդգրկել կը խոր-  
հի: Շատ հաւանական է, որ դաւանանքի  
տարբերութիւնը, որ քիչ վերը յիշեցինք,  
մեծ վրդովմունք չպիտի ստեղծէ այս ժո-  
ղովուրդին մէջ, երկու կարծիքներն ալ  
յստակ կերպով նշանակուած ըլլալով ի-  
րենց գրքերուն մէջ, եթէ եռանդն ու ըն-  
չաքաղցութիւնը չխառնուէին հոն: Որով-  
հետեւ աստուածաբաններուն ջերմօրէն  
ցանկացածին համաձայն, թէ ո՞վ առաւե-  
լութիւններ պիտի ստանայ, երբ իրենց  
թեկնածուներէն մէկը եռանդաւորն զաղա-  
փարի մը համար արտայայտուի, ուրիշ  
մը կը խորհի, թէ նախորդին հակառակը  
ընդգրկելով՝ ի՞նչ կուսակցութիւն կրնայ  
նպաստաւորուիլ որմէ վերջ կարելի եղած  
ցուցամոլութեամբ կը գործէ, ու աշխար-  
հականները, որոնք եկեղեցւոյն եկամուտ-  
ներուն տէրերն են, դրամական կանխա-  
վճարով կը ջանան այդ պաշտօնին տիրա-  
նալ եւ, իրենց նախընտրութեան համա-  
ձայն, մէկ կամ միւս կողմին կը կողմ-  
նակցին»:

«Ասիկա շատ պարզ է Ա. Պոլսոյ եւ Կ.  
Պոլսոյ վերջին նեղութեանց առթիւ:  
Սուպհի եւ Եփրեմ երկուքն ալ ջանացին  
Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը ստանալ,  
ուրիշ երկուքն ալ քանի մը տարի առաջ  
վար առնուած էին: Սուպհի եղաւ բախ-

տաւորը՝ անցեալ տարի պէրատ ստանա-  
լով ու Քաղկեդոնի վարդապետութեանց  
յարեցաւ: Եփրեմ, որ Ա. Պոլսոյ եպիս-  
կոպոսն է, յարմար դատեց իր կուսակցու-  
թիւնը զօրացնել՝ իր ատելութիւնը անոր  
վարդապետութեան հանդէպ ցոյց տալով:  
Ատոր համար ան նոր դաւանանք մը կազ-  
մեց, որուն մէջ Քաղկեդոնի ժողովը կը  
դատապարտուէր եւ Սուրբ Լեւոն (Պա-  
պը) կը նզովուէր: Իր եկեղեցւոյն երեք  
քահանաները, երբ բացարձակապէս մեր-  
ժեցին ստորագրել այս ձեւաւորումը, ա-  
ռանց որեւէ ծէսի պաշտօնադրուեցան:  
Անոնք ալ ղիմեցին Կ. Պոլսոյ պատրիարք  
Սուպհիի, որ Ա. Պոլսոյ եպիսկոպոսին  
վրայ իրաւասութիւն ունէր, եւ ան զա-  
նոնք ընդունեց իրր թէ թշնամիէ հալա-  
ծական մարդիկ՝ անոնց խոստանալով  
վերստին Ա. Պոլիս առաջնորդել զիրենք:  
Եւ ըստ այնմ Զատիէն վերջ զանոնք հոն  
տարաւ: Եւ ամէն բան կատարուելու վը-  
րայ էր, երբ յանկարծական դէպք մը ա-  
մէն բան տակնուվրայ ըրաւ, եւ այս ե-  
րեք քահանաները նաւարդելութեան  
մատնուեցան, որովհետեւ, ըստ Վեգիբի  
հրամանին, 15 հայ քահանաներ դատա-  
ւորին առջեւ յայտարարեցին, որ այդ ե-  
րեքը կրօնական խնդիրներու մէջ Փրանկ-  
ներու հետ յարաբերած են, եւ ասով  
պատճառ եղած այս նեղութեանց եւ բա-  
ժանմանց: Սուպհի պատրիարքին հակա-  
ռակորդները այս կերպով հակառակե-  
ցան, եւ իրենց սպառնալիքներով փա-  
խուստի մատնեցին հայ քահանաները, ո-  
րոնք Քաղկեդոնի վարդապետութեան  
հաւատարիմ էին: Հուսկ Բերայի մէջ  
զտնուեցաւ տպագրիչ մը, որ վերջերս  
դրամ ստացաւ Կաթողիկ գրքերու հրա-  
տարակութեան համար, ինչպէս եւ նա-  
խորդին անուամբ պարսիկ (իմա պարս-  
կահայ) մը, որ Վեգիբ խանի մէջ տպա-  
րան ունի, իր ընկերներուն հետ հակա-  
ռակորդներուն միացան եւ իրենց լաւա-  
գոյնն ըրին՝ խնդիրը արծարծելու հա-  
մար, որ այդ պահուն մեծ նշանակութիւն  
ունէր, քանի որ հարուստ եւ խելացի